ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 21 հունվարի 2008թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

Նախագահությամբ՝ Զ.Ղուկասյանի

Անդամակցությամբ՝ Կ. Հովհաննիսյանի

Կ. Բալայանի

Քննության առնելով դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

Քաղաքացի Էմիլիյա Մելիքյանի ներկայացուցիչ Հայկ Հարությունյանը դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան վիճարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228.1 հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը «միևնույն հիմքերով» պայման չնախատեսելու առումով և 231.1 հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի սահմանադրականությունը:

Դիմումի քննությունը քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1-րդ հոդվածի 3-րդ մասի առումով ենթակա է մերժման, քանի որ դրա վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի ՍԴՈ-690 որոշումը:

Դիմումի քննությունը քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228.1-րդ հոդվածի 1-ին մասի առումով եւս ենթակա է մերժման, քանի որ այն դիմումատուի նկատմամբ չի կիրառվել:

Ներկայացված դիմումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1 հոդվածի 4-րդ մասի առումով համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27, 28 հոդվածների և 69 հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ եւ 5-րդ կետերի, ինչպես նաև սահմանադրական դատարանի կանոնակարգի պահանջներին: Դիմումատուն պահպանել է Սահմանադրական դատարան դիմելու օրենքով նախատեսված ժամկետը:

Դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները և գտնում է, որ իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրությանը:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 69 հոդվածի 6-րդ կետով՝ Սահմանադրական դատարանի 1-ին կազմը

ՈՐՈՇԵՑ

1. Քաղաքացի Էմիլիյա Մելիքյանի ներկայացուցիչ Հայկ Հարությունյանի դիմումը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1 հոդվածի 3-րդ մասի եւ 228.1 հոդվածի 1-ին մասի սահմանադրականությունը վիճարկելու մասին, մերժել՝ տրամադրելով նրան ՍԴՈ-690 որոշումը:

2. Քաղաքացի Էմիլիյա Մելիքյանի ներկայացուցիչ Հայկ Հարությունյանի դիմումը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1 հոդվածի 4-րդ մասի սահմանադրականությունը վիճարկելու մասին, ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող կողմ ճանաչել ՀՀ Ազգային ժողովին:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ